Հաճախորդների սպասարկման մասնագետ

Ընկերություն։ "ՀԱԱԳ" ԱՓԲԸ

Դիմումների Աշխատանքային ընդունման

գրաֆիկ։ Լրիվ դրույք սկիզբ։ 27.06.18թ.

Դիմումների

Աշխատանքային ընդունման

փորձ։ Յանկալի է վերջնաժամկետ։ 06.07.18թ.

Աշխատանքի

Աշխատավարձ։ 100.000 ՀՀ դրամ սկիզբ։ 2018թ. հուլիս

Աշխատատեղի նկարագրություն

- 1. Ընկերության Հաճախորդների սպասարկման մասնագետն իրականացնում է Ընկերության հաճախորդների ներգրավման և սպասարկման աշխատանքներ, մասնավորապես.
- 1) ուսումնասիրում է ապահովագրական շուկան և ընտրում ապահովագրության վկայագրի պոտենցիալ գնորդներին,
- 2) հեռախոսազանգերի և հանդիպումների միջոցով Ընկերության պոտենցիալ և փաստացի հաճախորդներին ներկայացնում է ապահովագրության պայմանները, ապահովագրության վկայագրից (պայմանագրից) բխող պարտավորությունները, տրամադրում է ապահովագրական ծառայությունների վերաբերյալ մասնագիտական մանրամասն բացատրություններ և այլն,
- 3) ընդունում է ապահովագրության դիմումներ, հավաքագրում ապահովագրություն տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, կազմում է ապահովագրության պայմանագրեր

- (վկայագրեր) և կատարում է հաճախորդների անմիջական սպասարկման հետ կապված աշխատանքներ,
- 4) վարում է հաճախորդների թղթապանակները և մատյանները,
- 5) պատրաստում է բաժնին հասցեագրված գրությունների (նամակների) պատասխաններ, ինչպես նաև կազմակերպում է տարբեր ընկերություններին և մարմիններին ուղղված գրությունների նախագծերի կազմման աշխատանքները,
- 6) իրականացնում է գովազդային նյութերի տպագրության հետ կապված կազմակերպչական աշխատանքներ, ապահովում է Ընկերության ինտերնետային կայքի զարգացման և պարբերաբար թարմացման աշխատանքները և մասնակցում է Ընկերության գովազդային արշավներին, առաջարկներ է ներկայացնում Ընկերության ապահովագրական գործունեության զարգացմանը և իմիջին նպաստող միջոցառումների վերաբերյալ,
- 7) ներկայացնում առաջարկություններ ապահովագրության նոր տեսակների, պայմանների կամ դրանց առանձին դրույթների ներդրման կամ փոփոխությունների վերաբերյալ,
- 8) իրականացնում է Գործադիր տնօրենի, տնօրինության և բաժնի պետի կողմից տրվող այլ հանձնարարականները։

Տևողություն։ Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով։

Պահանջվող որակավորումներ և հմտություններ։

- Բարձրագույն կրթություն ապահովագրության, ֆինանսների կամ ընդհանուր տնտեսագիտության բնագավառում,
- Աշխատանքային փորձ ապահովագական, բանկային կամ ֆինանսական այլ ոլորտում (զանկայի է),
- Վերլուծողական մտածելակերպ,
- Որոշումներ կայացնելու ունակություն,
- Հաղորդակցվելու և բանակցելու գերազանց կարողություն,
- Պատասխանատվություն և մանրուքների նկատմամբ ուշադրություն,
- Սուղ ժամանակային պայմաններում աշխատելու ունակություն,
- Պրեզենտացիոն նյութերի պատրաստման և ներկայացման հմտություններ,
- Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն,
- Համակարգչային բազային գիտելիքներ։

Դիմելու համար անհրաժեշտ է ուղարկել ինքնակենսագրական (CV) info@eia.am էլ. փոստի հասցեին՝ նամակի թեմայի դաշտում նշելով «Հաճախորդների սպասարկման մասնագետ» կամ ներկայացնել Ընկերության գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48/1, «Սախարով» բիզնես կենտրոն, 3-րդ հարկ։